01/10.1/315-15 2015-01-19
AJV-01-04 2015-01-15

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Արա Բաբլոյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (*Պ-678-10.12.2014-ԱՄ-010/0*) վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի:

Միաժամանակ, հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված օրենսդրական տեխնիկայի կանոնները, անհրաժեշտ է՝

1) նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում «բառերով» բառը փոխարինել «բառերը» բառով.

2) նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածները միացնել՝ նկատի ունենալով, որ երկու հոդվածներում էլ փոփոխությունները վերաբերում են գործող օրենքի 3-րդ հոդվածին.

3) 3-րդ հոդվածում «ենթակետը» բառը փոխարինել «կետը» բառով:

Հայտնում ենք նաև, որ նախագծի ընդունումը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

Կից ներկայացվում են օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման նասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծի

1. Նախագծի կարգավորման արդյունքները: Առաջարկվող նախագծի ընդունման դեպքում կարգավորման արդյունքները կլինեն հետևյալը.

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման նասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունումը դրական ազդեցություն կունենա հանրային առողջության բնագավառում, քանի որ առաջարկվող փոփոխությունները և լրացումները հստակեցնում է համայնքներին տրվող սուբվենցիաների օգտագործման ուղղությունները և նպատակաուղղում է լուծել համայնքներում գոյություն ունեցող առողջապահական խնդիրները: Նախագիծը հստակեցնում է այն միջոցառումների շրջանակը, որոնք պետք է ֆինանսավորվեն բնապահպանական վճարների հաշվին: Նշված միջոռառումները նպատակ ունեն կանխարգելել, նվազեցնել կամ վերացնել ընկերությունների կողմից բնակչության առողջությանը հասցվող վնասները:

2. Նախագիծը չընդունելու դեպքում առողջապահության բնագավառի վրա ազդեցության գնահատման արդյունքները: Նախագիծը չընդունման դեպքում առողջապահության բնագավառի վրա կունենա բացասական ազդեցություն:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
««Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

««Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չի պարունակում:

Եզրակացություն

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործամն մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործամն մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն:**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) կատարվում են մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ նախատեսվում է բնապահպանական վճարներից համայնքների վարչական և ֆոնդային բյուջեներ մուտքագրվող մասհանումներն օգտագործել նաև տվյալ համայնքների տարածքում առողջապահական ծրագրերի իրականացման համար:

Նախագծով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով *հստակեցվում են մի շարք համայնքներին տրվող սուբվենցիաների օգտագործման ուղղությունները և միջոցների օգտագործման նպատակայնությունը, մասնավորապես՝ ամրագրվում են ֆինանսական միջոցներն առաջնահերթ ճանաչված առողջապահական խնդիրների լուծմանը ուղղելու իրավական հիմքերը* և Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ազդեցություն ***չի նախատեսվում:***

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման մասին եզրակացությունը

1. <<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագիծը բնապահպանության ոլորտին առնչվում է, ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ներկայացված դիտողություններն ընդունելու դեպքում նախագիծը չի հակասի ՀՀ կառավարության 2002 թականի սեպտեմբերի 26- N 1544-Ն որոշմամբ ամրագրված սկզբունքներին և պահանջներին:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունն առկա է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

Նախագծով առաջարկվում է հստակեցնել համայնքների բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված այն ծրագրերի և միջոցառումների շրջանակը, որոնք կարող են ֆինանսավորվել «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն բնապահպանական վճարներից համայնքների բյուջեներին մասհանվող գումարների հաշվին:

Ուստի Նախագծի թե ընդունումը և թե չընդունումը ՀՀ պետական և համայնքների բյուջեների եկամուտների և ծախսերի վրա կունենա չեզոք ազդեցություն:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-678-10.12.2014-ԱՄ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ-188 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածում «բացառապես բնապահպանական» բառերից հետո լրացնել «եւ առողջապահական» բառերով:

Հոդված 2. Օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասում «շրջակա միջավայրի պահպանության» բառերից հետո լրացնել «եւ առողջապահական» բառերով:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«բ) ընկերությունների գործունեությամբ պայմանավորված՝ համայնքի բնակչության առողջության պահպանմանը նպատակաուղղված ներքոհիշյալ միջոցառումները՝

- կապված շրջակա միջավայրի աղտոտման բացասական ազդեցության հետ՝ բնակչության առողջական վիճակի պարբերական զննությունների, սկրինինգների իրականացում, դրանց իրականացման համար անհրաժեշտ սարքավորումներով եւ այլ գույքով հագեցում.

- առողջապահական ծրագրերի մշակման համար անհրաժեշտ հետազոտությունների իրականացում, ինչպես նաեւ համաճարակաբանական հսկողության իրականացում այն հիվանդությունների նկատմամբ, որոնք պայմանավորված են շրջակա միջավայրի աղտոտմամբ.

- համայնքի բնակիչների շրջանում շրջակա միջավայրի աղտոտմամբ պայմանավորված հիվանդությունների բուժման ծրագրերի իրականացում.

- կանխարգելիչ միջոցառումների իրականացում, այդ թվում՝ բնակչության տարբեր խմբերի համար առողջության վրա շրջակա միջավայրի աղտոտվածության վտանգավոր հետեւանքները նվազեցնելու նպատակով ուսուցողական ծրագրերի իրականացում, հիգիենիկ գիտելիքների քարոզչություն, հիգիենայի կանոնների պահպանման, խմելու ջրի օգտագործման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում.

- հատուկ սննդակարգի մշակում եւ տրամադրում համայնքի շրջակա միջավայրի աղտոտվածությամբ պայմանավորված խոցելի խմբերի բնակիչներին.

- առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի հետ համաձայնեցված այլ համապատասխան միջոցառումներ:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Հիմնավորում

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 15-ի ՀՕ-188 օրենքում (այսուհետ՝ Օրենք) փոփոխություն եւ լրացումներ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է տվյալ օրենքի հիման վրա մի շարք համայնքներին տրվող սուբվենցիաների օգտագործման ուղղությունները եւ միջոցների օգտագործման նպատակայնությունը հստակեցնելու անհրաժեշտությամբ:

Հայաստանի Հանրապետության 11 համայնքներ 2013 թվականի պետական բյուջեից 321.7 միլիոն դրամ ծավալով սուբվենցիաներ են ստացել: Նախատեսված ֆինանսավորվող միջոցառումների զգալի մասը խիստ անուղղակի կերպով է անդրադառնում Օրենքով սահմանված բնապահպանական վճարներ վճարող ընկերությունների գործունեության արդյունքում համայնքներում առաջացող բնապահպանական եւ առողջապահական խնդիրների լուծմանը: Չնայած Օրենքն ընդհանուր գծերով սահմանում է միջոցների օգտագործման հիմնական ուղղությունները, սակայն հստակեցված չլինելու պատճառով որպես բնապահպանական եւ առողջապահական միջոցառումներ են դիտարկվում փողոցների նորոգումն ու ասֆալտապատումը, խաղահրապարակների նորոգումը, նախադպրոցական հաստատությունների երեխաներին եւ հղիներին սննդի տրամադրումը, ամբուլատորիայի տանիքի վերանորոգումը եւ այլ նման միջոցառումներ: Անհրաժեշտ է միջոցները օգտագործել ավելի նպատակային եւ դրանք ուղղել այնպիսի միջոցառումների ֆինանսավորմանը, որոնք կօգնեն կանխարգելել, նվազեցնել կամ վերացնել ընկերությունների կողմից համայնքների էկոհամակարգին եւ բնակչության առողջությանը հասցրած վնասի հետեւանքները:

Հանրապետությունում առողջապահության բնագավառում տարվող քաղաքականությունը նպատակաուղղված է բնակչությանը մատուցվող ծառայությունների քանակի ավելացմանը եւ որակի բարելավմանը: Օրենքի կարգավորման ոլորտում գտնվող համայնքներում գոյություն ունեն առողջապահական խնդիրներ, որոնք առաջնահերթ լուծում են պահանջում: Օրենքում փոփոխությունների կատարումը հնարավորություն կտա ֆինանսական միջոցներն ուղղել առաջնահերթ ճանաչված առողջապահական խնդիրների լուծմանը:

«Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման արդյունքում ավելի հստակ կսահմանվի առողջապահական այն ծրագրերի եւ միջոցառումների շրջանակը, որոնք կարող են ֆինանսավորվել Օրենքի համաձայն հավաքագրվող ֆինանսական միջոցների հաշվին եւ կբարելավվի ֆինանսական միջոցների օգտագործման նպատակայնությունն ու արդյունավետությունը: